ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ՀՀԿԳՄՍՆԷԱԾԱՊՁԲ-22/20 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սպորտային գույքի (ծածկոցով ըմբշամարտի գորգեր, ծանրաձողեր) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.01.2022 թ. ժամը 15:30-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Եղոյան /գնահատող/

Սուսաննա Ղազարյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բադալյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ |
| 2 | «Հրաչիկ Քանանյան» ԱՁ |
| 3 | «Գոհար Արամյան» ԱՁ |

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

3.1 ԷԱՃ-ի Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ ՍՊԸ» ՍՊԸ | «Հրաչիկ Քանանյան» ԱՁ | «Գոհար Արամյան» ԱՁ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | |

| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 49400000 | 49380000 | 49380000 | | | | |
| 2 | 45705600 | | | 46200000 | 46200000 | | |
| 3 | 26661600 | | | | | 24998000 | 24998000 |

**4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

**4.1** 1-ին չափաբաժնի մասով «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**4.2** 3-րդ չափաբաժնի մասով «Գոհար Արամյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**4.3** Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ 2022 թ հունվարի 11-ին ժամը 14:30-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 11.01.2022թ ժամը 14:30-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Եղոյան /գնահատող/

Սուսաննա Ղազարյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բադալյան

**5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքներ.**

**5.1** 1-ին չափաբաժնի մասով «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով «Էդալտ Գրուպպ» ֆիրմային անվամբ ներկայացված գորգը չի հանդիսանում ընբշամարտի համաշխարհային միջազգային նորմերին համապատասխան մրցումային գորգ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**5.2** 3-րդ չափաբաժնի մասով «Գոհար Արամյան» ԱՁ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**6. Գնահատման գործընթացի կասեցման մասին**

**6.1** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ**–ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.1 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**6.2** Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022 թ հունվարի 17-ին, ժամը 10:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 17.01.2022թ. ժամը 10:30-ին**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Կարեն Գիլոյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամ | Հարություն Եղոյան /գնահատող/ |
| | Սուսաննա Ղազարյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Կարինե Բադալյան |

**7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

**7.1** «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**8. Տվյալներ մերժված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

**8.1** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած և բավարար

գնահատված հայտ ներկայացրած մասնակցին՝ **«Գոհար Արամյան» ԱՁ-ին** ճանաչել ընտրված մասնակից:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**8.2** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՏԵԽՆՈ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**8.3** Հակադարձ աճուրդի արդյունքում **«Հրաչիկ Քանանյան» ԱՁ-ի** հայտը՝ 2-րդ չափաբաժնի մասով համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

**9.Գնահատման արդյունքների մասին**

**9.1** Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**9.2** Առաջնորդվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**9.3** Առաջնորդվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա՝ հայտերից ոչ մեկը հրավերի պահանջներին չբավարարելու հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողով՝**

__________ Կարեն Գիլոյան /Նախագահ/

__________ Հարություն Եղոյան

__________ Սուսաննա Ղազարյան

__________ Կարինե Բադալյան /քարտուղար/